

Յ Ը Ս Մ Ի Կ

Խաղաղ գիշեր էր։ Առուակի ափին
 Հոտոտ յասմիկը մեղմ՝ երերում էր,
 Նա տխուր թեքուած մէջ լուռ անտառին,
 Կայտառ ջրերին հանդարտ ասում էր.
 «Ռ՛ւր էք շտապում, դուք ի՞նչ էք ուզում,
 Ի՞նչ էք որոնում, դադար չառնելով,
 Միթէ ինձ նման սին ցնորքներում
 Ընկեր է՞ք փնտռում. հարազատ հոգւով.
 Եւ դուք լալիս էք, ցայտում էք հառաչ
 Տխուր հոգսերով լի կոհակներից
 Եւ սլանում էք առաջ ու առաջ,
 Միշտ հեռանալով հայրենի երկրից.
 Ա՛խ, ո՞ւր էք վազում դէպ անյայտ վայրեր,
 Միթէ հեռւում կա՞յ երջանկութիւն
 Եւ միթէ այնտեղ թողնո՞ւմ էք վշտեր,
 Վայելում՝ զգուանք եւ հանգստութիւն.
 Խաւարում առուի ալիք շողացին
 Եւ դէպի յասմիկ ծփալով արագ
 Հեզիկ կարկաչով նրան պատմեցին
 Իրանց աղեկէզ, դառնալի վիճակ.
 «Հանգիստ չգալով, անքուն անդադրում,
 Առաջ ենք ցայտում մեր վճիտ ջրեր,
 Թէ դէմ փոթորկի անվերջ մաքառում,
 Թէ ժէռ քարերին զարնում կոհակներ։

Դու չես ծաշակիլ վշտի դառնութիւն,
 Զես մալ մենակ օրերով երկար,
 Կծագէ արեւ, կսփռէ ջերմութիւն,
 Քեզ կգորգորեն շողեր սիրավառ:
 Եւ դու զարդարուած ոսկի ճաճանջով,
 Հեզանազ դէմքիդ կխաղայ ժպիտ,
 Բայց մենք համբոյրքը նորա գգուելով,
 Կսահենք առաջ անվերջ, անհանգիստ
 Ընկե՞ր ես ուզում, ա՛հ, կան ընկերներ.
 Եայի՛ր տես ինչպէս՝ մատաղ ծաղկունքով
 Ժածկուել է շուրջդ, եւ կանաչ դաշտեր
 Կեանք են ներշնչում անոյշ բուրմունքով:
 Ահա եւ լոյսը. սէր, յոյս է բերում
 Եւ կեանք եւ բերկրանք առատ զեղելով.
 Իսկ մե՛նք, — մենք անբաղտ առաջ ենք սահում,
 Այլոց ծարաւին լոկ յագուրդ տալով:
 Ահա եւ զեփիւռք քեզ են փաղաքշում,
 Օ՛րհներգ են երգում քեզ ազատութեան.
 Ա՛խ, դու մենակ չես. — զընութեան զրկում
 Ունիս մեծ քաժին մխիթարութեան.
 Ինչպէս հալածուած հայրենի երկրից,
 Դէպ ծով ենք վազում դառն տանջանքով,
 Գէթ մեր յիշատակ երբէք քո սրտից
 Զթողիս ջնջուի. — յիշիր ողբալով:

Օ՛, ոչ, ես այստեղ մենակ կտանջուիմ.
 Տարէք ինձ ձեզ հետ. թողէք միասին
 Ապրեմ եւ ապա ձեր զրկում մեռնիմ.
 Ասաց յասմիկը, թեքուեց ջրերին:

ԱՐՇԱԿ ԿԱՅԺՈՂՆԻ